ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 69/2

09-ը դեկտեմբերի 2023 թվականի

««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի շահակիցների կարիքների վերհանման և գնահատման» կարգը հաստատելու մասին

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 5-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի շահակիցների կարիքների վերհանման և գնահատման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ԻՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

Հավելված

Հաստատված է

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի

2023թ. դեկտեմբերի 09-ի նիստի թիվ 69/2 որոշմամբ

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի նախագահ_____Ա.Հ. Մակարյան

ԿԱՐԳ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի շահակիցների կարիքների վերհանման և գնահատման» կարգը (այսուհետև՝ Կարգ) սահմանում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետև՝ ԵՊՀ ԻՄ կամ Մասնաճյուղ) ռազմավարական նպատակների իրականացման համար շահակիցների գիտակրթական, սոցիալական կարիքների վերհանման մեթոդաբանությունը և մեխանիզմները, կարիքների ուսումնասիրության քայլերը, դրանց գնահատման և հավաքագրված տվյալների վերլուծության մեթոդները, վերհանված կարիքների վերլուծության արդյունքների օգտագործման հնարավորությունները:

2. Կարգը մշակվել է «Կրթության մասին» ՀՀ օրենքի, ԵՊՀ և ԵՊՀ ԻՄ կանոնադրությունների, «ԵՊՀ ԻՄ-ի կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման» կարգի, Կրթության որակի բնագավառում ԵՊՀ ԻՄ-ի քաղաքականության և ԵՊՀ ԻՄ ռազմավարական ծրագրի իրականացման պահանջների հիման վրա:

3. Որպես «շահակից» ընդունվում է այն անձը կամ կառույցը, ով իր գործունեությամբ անմիջականորեն ազդում է Մասնաճյուղի գործունեության վրա կամ կրում է համալսարանի ազդեցությունը:

4. Մասնաճյուղի ներքին շահակիցներն են ուսանողները, պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ, վարչական կազմերը, իսկ արտաքին շահակիցներն են՝ դիմորդները, շրջանավարտները, գործատուները:

5. Շահակիցների կարիքների գնահատման **նպատակն է.**

5.1. ապահովել շահակիցների մասնակցությունը մասնագիտության կրթական ծրագրերի մշակման, իրականացման, գնահատման և վերանայման գործընթացում,

5.2. բարելավել գիտական, կրթական, աշխատանքային և հանրային գործընթացների կազմակերպման որակը, բարձրացնել դրանց արդյունավետությունը,

5.3. բարելավել որակի ներքին ապահովման համակարգը՝ նրա գործընթացներում ներգրավելով ներքին և արտաքին շահակիցներին, ուժեղացնելով նրանց հետ հետադարձ կապը,

5.4. բարձրացնել մասնաճյուղի կառավարման արդյունավետությունը՝ ակտիվացնելով կառավարման մարմիններում ներգրավված շահակիցների գործունեությունը, ամրապնդելով նրանց հետ փոխադարձ կապն ու վստահությունը:

6. Շահակիցների կարիքների վերհանման և գնահատման **խնդիրներն են.**

6.1. պարբերաբար վեր հանել շահակիցների կարիքները՝ հաշվի առնելով շահակիցների առանձնահատկությունները, կարիքների փոփոխության վրա ազդող գործոնները, դրանց իրականացնելու մասնաճյուղի հնարավորությունները,

6.2. բացահայտել Մասնաճյուղում կրթության որակի ապահովման համակարգի խնդիրները,

6.3. բացահայտել Մասնաճյուղի գործունեությունից և կրթության որակի ապահովումից շահակիցների բավարարվածության աստիճանը:

7. Շահակիցների կարիքների ուսումնասիրության, վեր հանման, գնահատման և իրականացման գործընթացներն իրականացնում են Մասնաճյուղի մասնագիտական կրթության որակի ապահովման (այսուհետև՝ ՄԿՈԱ), պրակտիկայի կազմակերպման և շահակիցների հետ համագործակցության (այսուհետև՝ ՊԿՇՀ), կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման (այսուհետև՝ ԿԲԴՎ) բաժինները,

ֆակուլտետները և ուսանողական կառույցներն՝ իրենց գործառույթներին համապատասխան։

2.ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՔԱՅԼԵՐԸ

8. Շահակիցների կարիքների վերհանման համար պատասխանատու ստորաբաժանումները հիմք ընդունելով նախորդ ուստարվա կարիքների վերհանման ծրագրի իրականացման արդյունքները և Մասնաճյուղի ռազմավարական խնդիրներն ըստ գործառույթների և պատասխանատվության շրջանակի (***Տե՛ս Հավելված 2***) կատարում են հետևյալ քայլերը.

8.1. ուսումնական տարվա սկզբին կատարում են.

- մասնաճյուղի շահակիցների հաշվառում, որոնց կարիքները տվյալ ժամանակահատվածում (ուսումնական տարվա ընթացքում) պետք է գնահատել,
- ընտրում են կարիքների վերհանման մեթոդները և մեխանիզմները, հստակեցնում են կարիքների գնահատման ցուցիչները՝ առաջնորդվելով կարիքների գնահատման նախանշված մեթոդաբանությամբ (***Հավելված 1***),
- մշակում են շահակիցների կարիքների վերհանման ծրագիր և/կամ պլան-ժամանակացույց, որում ներառվում են կարիքների ուսումնասիրության, դրանց գնահատման և բավարարման միջոցառումներն ու գործողությունները և կարիքների վերհանման մեթոդից կախված՝ անհրաժեշտ տվյալների հավաքագրման և դրանց վերլուծության ժամկետները,

8.2. ըստ ժամանակացույցի իրականացնում են շահակիցների կարիքների ուսումնասիրություն և վերհանում,

8.3. վերլուծում և գնահատում են շահակիցների համար վերհանված կարիքները,

8.4. կազմում են շահակիցների կարիքների գնահատման վերաբերյալ հաշվետվություն,

8.5. Մյուս ստորաբաժանումները (ԿԲԴՎ բաժին, ՊԿՇՀ բաժին, ֆակուլտետներ) և ուսանողական կառույցները հաշվետվությունը ներկայացնում են ՄԿՈԱ բաժին՝ ամփոփ հաշվետվությունը և/կամ զեկույցը կազմելու համար:

8.6. ապահովում են շահակիցների կարիքների գնահատման արդյունքների հրապարակայնությունը,

8.7. շահակիցների կարիքների գնահատումից հետո, անհրաժեշտության դեպքում, ներկայացնում են առաջարկներ Մասնաճյուղի ռազմավարական պլանում նոր գործողություններ ներառելու վերաբերյալ (վերանայման վերաբերյալ)։

3. ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

9. Մասնաճյուղի շահակիցների կարիքների վերհանման **մեխանիզմներն են**.

9.1. շահակիցների կարիքների վերհանում առցանց հարցումների միջոցով,

9.2. շահակիցների կարիքների վերհանում ֆոկուս-խմբով հանդիպումների միջոցով,

9.3. դիմորդների կարիքների վերհանում մասնագիտական կողմնորոշման հանդիպումներում, բաց դռների օրերին, ամառային դպրոցներում և այլն,

9.4. ուսանողների կարիքների վերհանում տարբեր ստորաբաժանումների (ուսումնամեթոդական վարչություն, կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժին, մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին, ֆակուլտետներ) և ուսանողական կառույցների կողմից,

9.5. ուսանողների կարիքների վերհանում ուսանողական կառույցների նիստերում, մասնաճյուղի ղեկավարության և ֆակուլտետի ղեկավարության հետ հանդիպումներում, մասնաճյուղի և ֆակուլտետների գիտական խորհուրդների նիստերում,

9.6. ներքին շահակիցների կարիքների վերհանում բարձրացված խնդիրների և հարցերի ուսումնասիրության միջոցով,

9.7. դասախոսական կազմի կարիքների վերհանում ամբիոնների նիստերում, մասնաճյուղի և ֆակուլտետների գիտական խորհուրդների նիստերում, դասալսումների ժամանակ,

9.8. աշխատակիցների կարիքների վերհանում գիտական խորհրդի նիստերում՝ ստորաբաժանումների հաշվետվությունների միջոցով,

9.9. շրջանավարտների կարիքների վերհանում ամփոփիչ ատեստավորման ժամանակ,

9.10. շրջանավարտների զբաղվածության կարիքների վերհանում,

9.11. շրջանավարտների կարիքների վերհանում աշխատաշուկայում նրանց մրցունակության ուսումնասիրության արդյունքում,

9.12. գործատուների կարիքների վերհանում մասնաճյուղի տարբեր ստորաբաժանումների և ուսանողների հետ համագործակցային հանդիպումներում,

9.13. գործատուների կարիքների վերհանում շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման ժամանակ։

4.ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԸ

10. **<u>Ուսանողների</u>** ակադեմիական և սոցիալական կարիքների գնահատման համար ուսումնասիրվում է հետևյալ գործընթացներից նրանց բավարարվածության աստիճանը.

- Մասնաճյուղից ուսանողների սպասելիքների (ակնկալիքների) իրականացումից,
- ուսումնական գործընթացի կազմակերպումից և իրականացումից,
- ուսանողների առաջադիմությունից,
- մասնաճյուղի ռեսուրսներից և ծառայություններից,
- մասնաճյուղում դասավանդման որակից և արդյունավետությունից,
- հետազոտական աշխատանքների իրականացումից և գնահատումից,
- գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձևավորումից, դրանց գնահատումից և գնահատման ձևերից,

- դասընթացների բովանդակությունից և իրականացման մեթոդներից,
- գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվածության,
- պրակտիկաների կազմակերպումից բավարարվածության,
- լրացուցիչ խորհրդատվական աշխատանքների իրականացումից և դրանց որակից,
- գործընթացների թափանցիկությունից և ակադեմիական ազնվության ապահովումից,
- վարչական ստորաբաժանումների կողմից ուսանողներին կրթական, ֆինանսական և բարոյական աջակցությունից,
- դրամաշնորհային ծրագրերում ներգրավվածությունից և այլն։

11. **<u>Շրջանավարտների</u>** կարիքների գնահատման համար ուսումնասիրվում են.
    - մասնաճյուղում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության աստիճանը,
    - աշխատաշուկայում մասնաճյուղի շրջանավարտների մրցունակության աստիճանը,
    - շրջանավարտների զբաղվածության աստիճանը,
    - կարիերայի զարգացման և աշխատանքի տեղավորման հարցերում Մասնաճյուղի աջակցությունից շրջանավարտների բավարարվածության աստիճանը։

12. **<u>Պրոֆեսորադասախոսական կազմի</u>** կարիքների գնահատման համար ուսումնասիրվում են հետևյալ գործընթացներից նրանց բավարարվածության աստիճանը.
    - ուսումնամեթոդական ռեսուրսներից և ծառայություններից,
    - գիտահետազոտական և մանկավարժական գործունեության համար մասնաճյուղի ընձեռած հնարավորություններից,
    - ուսումնական գործընթացի կազմակերպումից,
    - ներքին և միջազգային դրամաշնորհային ծրագրերում ներգրավվածությունից,
    - գիտակրթական հարթակներում ներգրավվածությունից,
    - վերապատրաստման դասընթացների արդյունավետությունից,

- գիտական և մանկավարժական գործունեության համար խրախուսումից,
- առաջավոր փորձի տարածման համար խրախուսումից,
- մասնաճյուղի գործունեության վերաբերյալ իրազեկվածությունից,
- մասնաճյուղի գործունեության վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունից և ամբողջականությունից,

13. <u>Աշխատակիցների</u> կարիքների գնահատման համար ուսումնասիրվում են հետևյալ գործընթացներից նրանց բավարարվածության աստիճանը.

- անվտանգ աշխատանքային միջավայրից և պայմաններից,
- իրականացված լրացուցիչ աշխատանքի խրախուսումից,
- ռեսուրսների և ծառայությունների հասանելիությունից,
- ինքնազարգացման հնարավորություններից և խթանումից (վերապատրաստումներ, քննարկումներ, փորձի փոխանակում, ատեստացիա և այլն),
- առողջության և հանգստի ապահովման մասնաճյուղի ընձեռած հնարավորություններից,
- մասնաճյուղի գործունեության վերաբերյալ իրազեկվածությունից,
- մասնաճյուղի գործունեության վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունից և ամբողջականությունից,

14. <u>Արտաքին շահակիցների</u> կարիքների գնահատման համար ուսումնասիրվում են.

- մասնաճյուղի շրջանավարտներից բավարարվածության աստիճանը,
- մասնաճյուղի պրակտիկանտ-ուսանողներից բավարարվածության աստիճանը,
- Մասնաճյուղի գործունեության մասին տեղեկատվության հասանելիությունից և ամբողջականությունից բավարարվածության աստիճանը:

5.ՎԵՐՀԱՆՎԱԾ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

15. Վերհանված կարիքները հավաքվում և վերլուծվում են ՄԿՈԱ բաժնում՝ ուսումնական տարվա վերջում:

16. ՄԿՈԱ բաժինը վերլուծված արդյունքների հիման վրա կազմում է հաշվետվություն/զեկույց:

17. ՄԿՈԱ բաժինը վերլուծության արդյունքները ներկայացնում է տնօրենության նիստերից մեկում և ապահովում է դրանց հրապարակայնությունը:

18. ՄԿՈԱ բաժինը վերլուծության արդյունքների հիման վրա կազմում է խնդիրների փաթեթ և հաջորդ ուսումնական տարվա սկզբին փաթեթն ուղարկում է ներառված խնդիրների լուծման համար պատասխանատու ստորաբաժանումներին՝ քննարկման համար:

19. Վերհանված կարիքները և դրանց վերլուծության արդյունքները քննարկվում են համապատասխան ստորաբաժանումներում, ստորաբաժանումները ներկայացված փաթեթի հիման վրա կազմում են վերհանված խնդիրների լուծման ծրագիր և 10 օրվա ընթացքում ՄԿՈԱ բաժին են ներկայացնում ծրագիրը ու կարիքների բավարարմանն ուղղված առաջարկներ:

20. Վերհանված կարիքների վերլուծության արդյունքներն օգտագործվում են Մասնաճյուղի ռազմավարական նոր ծրագրի մշակման, մասնագիտությունների կրթական ծրագրերի մշակման և վերանայման, ուսումնական, կրթական, գիտական և հասարակական գործունեության բարելավման և նյութատեխնիկական բազայի բարելավման համար:

21. Վերհանված կարիքների վերլուծության արդյունքների հիման վրա, անհրաժեշտության դեպքում, ՄԿՈԱ բաժինը Մասնաճյուղի գիտական խորհրդին ներկայացնում է առաջարկներ Մասնաճյուղի ռազմավարական պլանում նոր գործողություններ (կամ քայլեր) ներառելու վերաբերյալ (վերանայման վերաբերյալ):

6.ԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

22. Սույն կարգը հաստատում է մասնաճյուղի գիտական խորհուրդը:

23. Կարգում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել.

23.1. Մասնաճյուղի տնօրենի,

23.2. որակի կառավարման հանձնաժողովի,

23.3. կարիքներ վերհանող ստորաբաժանումների և դեկանների առաջարկություններով՝ գիտական խորհրդի որոշմամբ:

Հավելված 1.

ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐՆ

Շահակիցների կարիքների գնահատման համար Մասնաճյուղն առաջնորդվում է այն ռազմավարությամբ, որ կարիքների գնահատման համար ուսումնասիրության նպատակներն ու նրա առաջադրած հարցերը, տվյալների հավաքագրման սկզբունքները պետք է համահունչ լինեն Մասնաճյուղի առաքելությանը, ուղղորդված լինեն նրա ռազմավարական նպատակների իրականացմանը:

Մասնաճյուղի շահակիցների կարիքների գնահատման մեթոդաբանությունը ուսումնասիրության (հետազոտության) նախագծման հայեցակարգ է, որը որոշում է.

- ուսումնասիրության **զարգացման ուղղությունը**,
- ուսումնասիրության **ձևավորումը** (դիզայնը), որն իրենից ներկայացնում է հետազոտության հիմնական հարցին պատասխանելու ծրագիրը, շահակիցների խմբի ընտրությունը (ընտրանքը), գնահատման չափանիշները,
- ուսումնասիրության **մեթոդները**, այսինքն այն ռազմավարությունը, որն օգտագործվելու է ծրագրի իրականացման համար,
- **տվյալների հավաքագրման** եղանակը, տվյալների տեսակը (քանակական և որակական) և տեղեկատվության ստացման աղբյուրները,
- **վերլուծական գործիքները**, որոնք պետք է օգտագործել ստացված տվյալները համակարգելու, մշակելու և վերլուծելու համար:

Ուսումնասիրության ձևավորումը ուսումնասիրության մեթոդների և տեխնիկայի ամբողջություն է, որոնք օգտագործվում են հետազոտության տարբեր տարրերը համակարգված կերպով ներառելու համար:

Ուսումնասիրության մեթոդի ընտրությունը կախված է ուսումնասիրության նպատակից, անհրաժեշտ տվյալների որակական կամ քանակական պարամետրերից, ուսումնասիրության ժամանակահատվածից և այլն:

Ուսումնասիրության ձևավորումը և մեթոդները փոխկապակցված են և ուսումնասիրության լավ ձևավորումն օգնում է ճիշտ կառավարել տվյալները և նաև օգնում է ավելի արդյունավետ պատասխանել հետազոտության հարցին:

Շահակիցների կարիքների վերհանման և գնահատման համար կիրառվում են հետևյալ հիմնական **մեթոդները.**

1. **Դիտարկում,** որի ժամանակ շահակիցների հետ համագործակցության և որոշակի գործընթացների մասնակցության միջոցով համապատասխան ստորաբաժանումների ներկայացուցիչները ծանոթանում են շահակիցների գործունեությանն իրենց բնական միջավայրում:
2. **Հարցումներ,** որոնք կիրառվում են շահակիցների մեծ խմբի խնդիրները հասկանալու, նպատակային արդյունքներ հավաքելու կամ կոնկրետ հարցերի պատասխաններ ստանալու և վիճակագրական եզրակացություններ կատարելու համար:
3. **Հարցազրույց,** որն իրականացվում է փոքր թվով հարցվողների հետ հաղորդակցման միջոցով և նպատակ ունի բացահայտելու որոշակի գաղափարի, խնդրի, ծրագրի կամ իրավիճակի վերաբերյալ նրանց տեսակետները:
4. **Ֆոկուս խումբ,** որն իրականացվում է շահակիցների միատարր կամ տարասեռ խմբի հետ նոր գաղափարներ, գործընթացներ, որոշումներ, գործունեություն, ռազմավարություն, պլանավորում և այլն քննարկելու համար:
5. **Վիճակագրական վերլուծություն,** որն իրականացվում է առանց շահակիցների անմիջական մասնակցության և աշխատակիցների համար վերլուծվում են նրանց աշխատանքային ձեռքբերումները, դասախոսական կազմի համար՝ գիտական գործունեության արդյունքները, ուսանողների համար՝ նրանց առաջադիմության արդյունքները, դիմորդների համար՝ մրցութային արդյունքները, շրջանավարտների համար՝ զբաղվածության և աշխատաշուկայում պահանջվածության արդյունքները և այլն:
6. **Երկրորդական տվյալների վերլուծություն (**արխիվային ուսումնասիրություն), որն իրականացվում է ուսումնասիրությունների ժամանակ տարբեր նպատակներով

հավաքագրված երկրորդական տվյալների վրա, որոնք կարող են օգտակար լինել շահակիցների խնդիրները նոր տեսանկյունից բացահայտելու համար։

Կարիքների վերհանման մեթոդից և նպատակից կախված հավաքագրված տվյալների վերլուծության համար կիրառվում են **տվյալների որակական և քանակական վերլուծության մեթոդները,**

- **տվյալների որակական վերլուծությունը** ենթադրում է, որ ուսումնասիրությունն ուղղորդված է որակական փոփոխությամբ կամ ազդեցությամբ և անհրաժեշտ է գնահատել ուսումնասիրվող հարցերի ըմբռնման խորությունը, ենթադրում է ընդարձակ և ժամանակատար տեղեկատվության հավաքագրում և հիմնականում կիրառվում է դիտարկման կամ հարցազրույցի միջոցով հավաքագրված տվյալների վրա,
- **տվյալների քանակական վերլուծությունը** ենթադրում է մեծաքանակ տվյալների առկայություն, որոնք կարող են մանրամասներ չպարունակել և որոշում է այդ տվյալների ազդեցության մակարդակը, օգնում է ուսումնասիրությունից ընդհանուր եզրակացություններ անել և հիմնականում կիրառվում է հարցումների միջոցով հավաքագրված տվյալների վրա։

Հավելված 2.

Կարիքների վերհանման գործընթացի իրականացման պարտականությունների և իրավասությունների բաշխման աղյուսակ

	Գործողությունը	ԳԽ	Տնօրեն	ՄԿՈԱԲ	ԿԲԴՎԲ	ՊԿՇՀԲ	Ֆակ. -ներ
1.	Շահակիցների հաշվառում (ներքին և արտաքին շահակիցների ցանկ)			Ղ, Պ, Ի	Ի	Ի	Ի
2.	Շահակիցների կարիքների վերհանման ծրագրի (պլան-ժամանակացույցի) մշակում		Ղ	Ի	Ի	Ի	
3.	Կարիքների վերհանման և գնահատման մեթոդի (մեթոդների) ընտրություն			Ղ, Ի	Ի	Ի	
4.	Կարիքների գնահատման ցուցիչների սահմանում		Ղ	Ի	Ի	Ի	Ի
5.	Շահակիցների կարիքների ուսումնասիրություն և վերհանում (տվյալների հավաքագրում)			Պ, Ի	Ի	Ի	Ի
6.	Վերհանված կարիքների վերաբերյալ տվյալների մշակում և վերլուծություն			Ղ, Ի	Ի	Ի	Ի
7.	Հաշվետվության կազմում		Ղ	Ի			
8.	Արդյունքների հրապարակայնության ապահովում		Ղ	Ի			
9.	Բարելավման առաջարկների ներկայացում		Ղ	Ի	Ի	Ի	
10.	Բարելավմանն ուղղված որոշումների կայացում	Ղ	Պ	Ի			

*Ուշադրություն. Ղ- գործընթացի ղեկավար, Պ – գործընթացի գլխավոր պատասխանատու, Ի – գործընթացն իրականացնող